ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ
«Գդանսկի լիբերալները». Լեհաստանի պրագմատիկ լիբերալիզմի հիմնադիրները

ՊԻՈՏՐ ԲԻԵԳԱՇԵՎԻՉ
Բաց համալսարան, Մեծ Բրիտանիա

Հոդվածի նպատակն է ներկայացնել «Գդանսկի լիբերալներ» անունը կրող մտավորականների խմբի գաղափարական և սոցիալ-քաղաքական հայացքները, որոնք ոչ միայն հիմնված էին լիբերալիզմի դասական մոտեցումների վրա, այլև կրում էին Լեհաստանում առկա քաղաքական իրավիճակի ազդեցությունը: Ներկայացվում են հիմնական գաղափարները և քաղաքական ծրագիրը: Ուսումնասիրվում են «Գդանսկի լիբերալների» և Լիբերալ-դեմոկրատական կոնգրեսի փոխհարաբերությունները: Փորձ է արվել «Գդանսկի լիբերալների» հայեցակարգը ներառել Կոնգրեսի կուսակցական ծրագրում: Երևույթի գիտական վերլուծությունը կարևոր է տրանսֆորմացիայի էությունը բացահայտելու տեսակետից, ուստի խնդրի խորքային ուսումնասիրությունը կօգնի հասկանալ մի շարք երևույթներ ոչ միայն Լեհաստանում, այլև ամբողջ Արևելյան Եվրոպայում:

Բանալի բառեր
«Գդանսկի լիբերալներ», լիբերալիզմ, մասնավորեցում, ռեգիոնալիզմ

«Գդանսկի լիբերալներ» էր կոչվում 1980-ական թվականների սկզբին ձևավորված ինտելեկտուալ խումբը, որի նպատակն էր համախմբել կոմունիզմին հակադրվող Գդանսկի մտավորականությանը: Գործունեության սկզբնական փուլում խմբի անդամները չունեին հստակ ձևակերպված կողմնորոշումներ, սակայն, նախևառաջ, նրանք չէին ցանկանում միանալ գործող համակարգին: «Գդանսկի լիբերալների» գաղափարները սկսեցին ձևավորվել 1983թ., երբ հրատարակվեց «Քաղաքական ակնարկ» (“Przeglad Polityczny”) հանդեսի առաջին համարը, որի գլխավոր խմբագիրը Դոնալդ Տուսկն էր՝ Եվրոպական խորհրդի ներկայիս նախագահը (ի սկզբանե ներկայացված Աննա Բարիչ և Թադեուշ Դոնեցկի կեղծանուններով): Խմբագրակազմում էին նաև Վ. Դուդան, Մ. Զայակալան, Յ. Կոզլովսկին, Ա. Զարեբսկին և Վ. Ֆուլեկը[1]: «Գդանսկի լիբերալների» թվում էին նաև

[1] **Paradowska J., Baczyński J.,** Folders of Liberals, *Obserwator Poznan*, 1993, p. 55.

Դարիուշ Ֆիլարը, Լեխ և Լոնգին Մաժևսկիները, Պյոտր Կապչինսկին և Յան Շոմբուրգը: «Գդանսկի լիբերալների» տեսակետներն արտացոլվեցին Լիբերալ-դեմոկրատական կոնգրեսի (1990թ.) կուսակցական ծրագրում: Վերջինս դադարեց գոյություն ունենալ 1994թ.՝ միանալով «Դեմոկրատական միություն» կուսակցությանը (Unia Demokratyczna):

Հիմնարար գաղափարները

«Քաղաքական ակնարկ» հանդեսի առաջին համարում նշվում էր. «Մենք չենք ձգտում ստեղծել մեր սեփական քաղաքական ծրագիրը: Հավանաբար, դեռ վաղ է դրա համար»[2]: Դա պայմանավորված էր նրանով, որ Լեհաստանում լիբերալ գաղափարները դարձել էին քննարկման առարկա միայն այնպիսի խոշոր գիտական կենտրոններում, ինչպիսիք էին Վարշավան, Պոզնանը և Կրակովը: Այդ թեմայով Գդանսկում հրապարկվեցին միայն մի քանի աշխատանքներ: «Գդանսկի լիբերալների» գործունեության առաջին տարիներին լիբերալիզմի էության վերաբերյալ դեռևս հակասություններ չկային: «Քաղաքական ակնարկի» նպատակն էր ստեղծել գաղափարական և առարկայական հիմքեր նոր քաղաքականության համար: Այդ նպատակի իրագործմանն էր ուղղված Դ. Տուսկի «Մտորումներ լիբերալիզմի մասին» հոդվածը, որը, սակայն, լուրջ հետազոտություն չէր այդ հայեցակարգի փիլիսոփայական դրույթների վերաբերյալ: Ազատությունը «գործնական լիբերալիզմի» առավել կարևոր բնորոշիչն է[3]: Տուսկը հստակ չէր մատնանշում «Գդանսկի լիբերալների» հիմնական գաղափարները: «Ի՞նչ է պահանջում լիբերալը խորհրդարանական ժողովրդավարության և ի՞նչ՝ ամբողջատիրական վարչակարգի դեպքում: Կոմունիզմի և ֆաշիզմի պայմաններում յուրաքանչյուր լիբերալ որդեգրում է ծայրահեղ դիրքորոշումներ և դիմում ծայրահեղ գործողությունների»[4]: Երեք տարի անց Տուսկը հռետորական հարց ուղղեց. «Որքա՞ն կարևոր է մեզ համար ազատ

[2] From Editorial, *Political Review*, 1983, 1, p. 1.
[3] J. K. Bielecki's interview with Mark Rudziński. *I have no conscience conflict. Marek Rudziński talks to Jan K. Bielecki* , "Youth Banner" from 24-26, 1991, 9, p.15.
[4] **Barycz A.** (D. Tusk), Reflections on Liberalism, *Political Review*, 1984, 2, p. 23.

աշխարհի լիբերալներին հակադրվելը՝ սոցիալական պետության գործերին մասնակցության, ազատ մրցակցության, մարդու լիբերալ ըմբռնման շրջանակներում: Մեզ համար, ովքեր ապրում են անսահմանափակ իշխանությամբ օժտված ոստիկանների և կուսակցական առաջնորդների երկրում[5]»: Ինքն էլ պատասխանում է հետևյալ կերպ. «Խելամիտ կլինի որդեգրել լիբերալիզմի ավելի լայն տարբերակ, որը ենթադրում է հակաամբողջատիրություն»[6]: Ոչինչ չի կարող վիճարկել այն պարզ ճշմարտությունը, որ լիբերալիզմն առաջարկում է ամբողջատիրական համակարգից խուսափելու արմատական ձև՝ ներկայացնելով լիովին հակառակ գաղափարներ[7]: 80-ական թվականների լիբերալիզմը դիտարկվում էր «ոչ թե որպես սոցիալ-քաղաքական և տնտեսական ծրագիր, այլ որպես անհատի կողմնորոշում, մտածողության ձև և քաղաքական սկզբունքների նախնական կանոն»[8]: Այդ իսկ պատճառով այն չէր պահանջում որևէ հիմնավորում: Արդյունքում հաջորդ քաղաքական համակարգի կառուցման հետ կապված խնդիրներն անհետացան տեսադաշտից: Դեռևս չկար ընդհանուր պատկերացում, թե ինչպիսի ազդեցություն կունենա նոր կարգին անցնելը և թե ինչ գաղափարական-ծրագրային սկզբունքներ պետք է որդեգրի ազատ Լեհաստանը: Լիբերալիզմը պետք է վերածվեր ուտոպիայի կամ ավելի իրատեսական հայեցակարգի, որը տարածում է ստացել միայն այն պատճառով, որ զգալիորեն հակադրվում է կոմունիստական վարչակարգին[9]: Տուսկը համաձայն էր այդ գնահատականի հետ, բայցևայնպես, նշում էր, որ «Գդանսկի լիբերալները» մշակել են որոշ ընդհանուր պատկերացումներ և ենթադրություններ: Դրանցից հարկ է առանձնացնել հետևյալները.

1. Լեհաստանում քաղաքակրթության անկման հիմնական պատճառներից էր էտատիզմը: Առանց արտադրության

---

[5] **Doniecki T.** (D. Tusk), The Way and the Choice, *Political Review*, 1987, 9, p.18.
[6] Նույն տեղում:
[7] **Węgielek J.**, Traps of Liberalism, *Political Review*, 1991, 13, p. 11.
[8] **Doniecki T.** (D. Tusk), նշվ. աշխ., էջ 18:
[9] **Szacki J.,** The rebirth of liberalism?, Idem: *Dilemmas of Historiography of Ideas and Other Sketches and Studies*, Wydawnictwo Uniwersytetu Warszawskiego, Warsaw, 1991, p. 201.

միջոցների մասնավորեցման ոլորտի հիմնարար փոփոխությունների և պետության ամենակարող բնույթի սահմանափակման՝ Լեհաստանը չի կարողանա դուրս գալ ճգնաժամից:

2. Մասնավոր սեփականությունը, ազատ շուկան և ազատ մրցակցությունը տնտեսության պատշաճ գործարկման երաշխիքներն են: «Երրորդ ձևի», «ոչ բուրժուական քաղաքացիական հասարակության», «մարդկային դեմքով սոցիալիզմի» հետ կապված ցանկացած գաղափար ուտոպիստական է՝ անկախ դրա ծագումից: Քաղաքացիական հասարակության գաղափարը՝ իր ավանդական իմաստով, անքակտելիորեն կապված է տնտեսական ազատության հետ:
3. Լեհական հասարակությունն էգալիտար հասարակություն է: Այդուհանդերձ, դեռևս տարածված է էտատիզմին բնորոշ պետության ամենակարողությունը և գերպաշտպանվածությունը, և ընդդիմության հիմնական խնդիրն է փոխել այդ վերաբերմունքը:
4. Լեհերի համար բարեփոխումներն անհրաժեշտություն են: Միաժամանակ նրանք պետք է պահանջեն հարգել իրենց իրավունքները:[10]

Քաղաքական ծրագիրը

1980-ական թվականներին Լեհաստանի լիբերալների ծրագրի հիմքում ընկած էին հետևյալ սկզբունքները՝ «ազատություն, այլ ոչ հավասարություն», «անհատ, այլ ոչ կոլեկտիվ», «օրենք, այլ ոչ բռնություն», «սեփականություն, այլ ոչ օտարում», «զարգացում, այլ ոչ հեղափոխություն»[11]: «Գդանսկի լիբերալներն» արագ ստեղծեցին քաղաքական համակարգի սեփական հայեցակարգը՝ ժողովրդավարական կապիտալիզմը: Դրա համար ոգեշնչման աղբյուր դարձան Մ. Նովակայի հրապարակումները, որի տարրերն էին խորհրդարանական-նախագահական հանրապետությունը, ռեգիոնալիզացիան, պետության և եկեղեցու բաժանումը, լայնածավալ մասնավորեցումը,

[10] **Szacki J.,** նշվ. աշխ., էջ 25:
[11] **Filar D.,** Being a Liberal, *Political Review*, 1988, 11, p. 20.

ինչպես նաև լիբերալ հեղափոխությունը՝ որպես դրանց հասնելու միջոց[12]: «Գդանսկի լիբերալների» քաղաքական ծրագիրը պարունակում էր քաղաքական և տնտեսական կարգերի տեսլական, ինչպես նաև կոմունիզմից ձերբազատվելու և եկեղեցու ու պետության բաժանման վերաբերյալ նկատառումներ: «Գդանսկի լիբերալների» գաղափարների առավել կարևոր տարրերն էին մասնավորեցումը և ռեգիոնալիզմը: Դրանք այն երկու հիմնական նախապայմաններն էին, որոնք անհրաժեշտ էին կոմունիզմի վերջնական տապալման համար[13]: Եկեղեցու և պետության «պատշաճ» բաժանումը «Գդանսկի լիբերալների» ծրագրի առավել քիչ մշակված տարրն էր: Նրանք ընդունում էին, որ «չեզոքության աշխարհայացքը պետք է այլ կերպ դրսևորվի Լեհաստանում, քան Արևմուտքում է»: Սակայն, ծրագրի մանրամասները այդ խնդրի վերաբերյալ դարձել էին միայն հանրային քննարկման առարկա: Սոսկ ակնհայտ էր, որ դա կհանգեցնի եկեղեցու զարգացմանը[14]:

Պետական իշխանության բարձրագույն մարմինները. Ըստ «Գդանսկի լիբերալների», նախատեսվում էր, որ Լեհաստանի նախագահը պետք է ընտրվեր ուղղակի քվեարկությամբ: Պաշտոնավարման ժամկետը պետք է լիներ վեց տարի՝ առանց վերընտրման արգելքի: Բացի խորհրդարանական պետության գլխին վերապահված ավանդական լիազորություններից, նախագահն ունենալու էր նաև հատուկ իրավասություններ: Դրանցից առավել կարևորների թվում պետք է լինեին զինված ուժերի ղեկավարի նշանակումն ու ազատումը, պատերազմական իրավիճակում զինված ուժերի հրամանանատարի նշանակումը, արտակարգ իրավիճակների սահմանման և անցկացման հետ կապված լիազորությունները, վարչապետի նշանակումը և ազատումը, նախագահի և արտաքին գործերի ու պաշտպանության նախարարների միջև անմիջական կապի հաստատումը, օրենսդիր մարմնի վետոյի իրավունքը և խորհրդարանը վաղաժամկետ լուծարելու անսահմանափակ հնարավորությունը:

---

[12] **Mażewski L.**, Democratic Capitalism, Przegląd Polityczny, 1991, 14, p. 21; **Tusk D.,** Solidarity and pride, Gdansk, 2005, p. 54.

[13] **Tusk D.**, Pomeranian regional idea. Paper presented at the 2nd Kashubian Congress, *Pomerania. Socio-Cultural Monthly*, 1992, 6, p. 2.

[14] **Mażewski L.,** նշվ. աշխ., էջ 23:

Պաշտոնավարման գործունեության ընթացքում ընդունած քաղաքական որոշումների համար նախագահը պատասխանատվության չէր ենթարկվելու: Պատասխանատվություն կարող էր սահմանվել միայն քրեական և սահմանադրական հիմքերով՝ խորհրդարանի երկու պալատների ընդունած որոշումների հիման վրա: Դրա նպատակն էր ապահովել պետության գլխի անկախությունը խորհրդարանից՝ նշանակման առնչությամբ, ինչպես նաև նրան օժտել իշխանության նկատմամբ խորհրդարանին հավասար լեգիտիմությամբ: Նախագահին պետք է շնորհվեին մի շարք իրավասություններ, որոնց շնորհիվ վերջինս ակտիվ գործունեություն կծավալեր քաղաքական կյանքում՝ շրջանցելով կառավարությունը: Դրանց թվում էին լինելու նաև անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերը: Վետոյի իրավունքի կասեցման և անսահմանափակ որոշումների ընդունման վերաբերյալ պալատների իրավունքը կնշանակեր խիստ միջամտություն օրենսդրական գործունեությանը:

Խորհրդարանը պետք է կազմված լիներ երկու հավասար պալատներից՝ Սեյմից (ստորին պալատ) և Սենատից (վերին պալատ): Խորհրդարանի հիմնական գործառույթներից էր լինելու օրենսդրական գործունեությունը (նախագահի հրամանագիրը կարող էր վավերացվել միայն խորհրդարանական մանդատի միջոցով՝ միջխորհրդարանական ժամանակահատվածում) և կառավարության նկատմամբ վերահսկողությունը: «Գդանսկի լիբերալները» մերժում էին Սենատի՝ որպես ռեգիոնների ներկայացուցչի գաղափարը: Վերջինս որոշվելու էր ռեգիոնալ ընտրություններում, սակայն չէր ներկայացնելու ռեգիոնը, քանզի դա կհակասեր ռեգիոնալ պետության գաղափարին (ունիտար և ոչ դաշնային պետություն): Երկու պալատները պետք է ձևավորվեին համընդհանուր ընտրությունների արդյունքում՝ ձայների մեծամասնությամբ[15]:

«Գդանսկի լիբերալները» պահանջում էին Սենատի անկախությունը Սեյմից: Խորհրդարանի ստորին պալատի լուծարումը չէր հանգեցնելու վերին պալատի ընտրությունների անցկացմանը: Սենատի գործունեության շարունակականությունն ավելի կամրապընդվեր, եթե սենատորներն ընտրվեին 4 տարի ժամկետով, իսկ

[15] **Mażewski L.,** նշվ. աշխ., էջ 25:

սենատի կազմի կեսը վերաձևավորվեր յուրաքանչյուր երկու տարին մեկ: Վերին պալատին պետք է վերապահվեր օրենքների նախագծումը: Օրենսդրական ակտի ստեղծումը նշված ձևով կլիներ միայն բնական աղետների, պատերազմների և արտակարգ իրավիճակների դեպքում՝ կառավարության հայցմամբ: Սենատի ընդունած օրենքները պետք է ներկայացվեին Սեյմի հաստատմանը՝ դրանց ստեղծումից հետո 30 օրվա ընթացքում: Հատուկ ընթացակարգով ձևավորված այդ իրավական ակտերը կդադարեին գործել երկու դեպքում. 1) եթե խորհրդարանի ստորին պալատը դրանք չհաստատեր, 2) եթե դրանք չներկայացվեին հաստատման:

«Գդանսկի լիբերալները» դեմ էին Սենատի վերափոխմանն ինքնակառավարվող պալատի և կողմ էին վերին պալատի համար համընդհանուր ընտրությունների կազմակերպմանը: Նրանք չէին ուզում, որ պասիվ քվեարկությանը մասնակցեն միայն այն քաղաքացիները, որոնք ընտրվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում[16]:

Մասնավորեցումը՝ որպես միջին խավի ձևավորման փորձ. «Գդանսկի լիբերալների» առաջ քաշած փոփոխությունները բարդ էր իրականացնել այն պատճառով, որ սկզբնական փուլում չկար ոչ մի կարևոր նախադրյալ նոր համակարգի կառուցման համար: Լեխ Մաժևսկին նշում էր, որ «Միջին խավի ստեղծումը՝ արևմտյան մոդելի օրինակով, կարող է ծառայել որպես լավ հիմք»: Յանուշ Լևանդովսկին, Յան Շոմբուրգը, Լեխ և Լոնգին Մաժևսկիներն առաջարկում էին համընդհանուր մասնավորեցման գաղափարը՝ որպես դրա ստեղծման գործիք: Գաղափարը նոր չէր, քանզի այն երկրներում, որտեղ յուրացման սոցիոլոգիական հարթությունը խիստ ընդգծված է, մեծ ուշադրություն է դարձվում փոքր բաժնետերերի իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանը: Դա բնորոշ էր ժողովրդական կապիտալիզմին, որի գաղափարն առաջ էր քաշել Լյուդվիգ Էրհարդը 1957թ. Համբուրգում տեղի ունեցած Քրիստոնեա-դեմոկրատական միության համագումարի ժամանակ, ինչպես նաև Ավստրիայում տեղի ունեցած պետական հատվածի հետագա վերամասնավորեցմանը, որը

[16] **Tusk D.,** Vision of Parliament in the new Constitution of the Republic of Poland, Wydawnictwo Sejmowe, Warsaw, 1995, p. 43.

նույնպես, այսպես կոչված, սոցիալական մասնավորեցում էր (Soziale Privatisierung): Վերամասնավորեցման մի շարք նախաձեռնություններում սոցիալական դրդապատճառներն ուղղակիորեն կապված էին ֆիսկալ դրդապատճառների հետ: Պահպանողականների հստակ հռչակված նպատակն էր բրիտանական ժողովրդական կապիտալի շուկան: Դա ուղղակի, անուղղակի և ոչ կապիտալիզացված խնայողությունների միջոցով տնտեսական ռիսկերի դիմող անհատների լայն շերտի ստեղծման գիտակցված գործընթաց է, որն անհրաժեշտ է տնտեսության վերականգնման և տնտեսական մշակույթի (ձեռնարկատիրական մշակույթ) ստեղծման համար: Այդ գործընթացն ընթանում էր նաև Ֆրանսիայում և Արևմտյան մի շարք այլ երկրներում:

Լևանդովսկու և Շոմբուրգի առաջ քաշած համընդհանուր և զանգվածային մասնավորեցումը պետք է լիներ ամորֆային պետական սեփականության վերից վար վերափոխում առկա արտադրական ակտիվների նկատմամբ անհատական և կամավոր լիազորությունների ապակենտրոնացված համակարգի[17]: Ըստ Լևանդովսկու և Շոմբուրգի, սեփականության իրավունքի փոխանցման հետևանքները հասարակության լայն շրջանակի համար կլինի ոչ միայն տնտեսության արմատական սոցիալականացումը, այլև մասնավոր սեփականության տարածումը, շուկայական տնտեսության ստեղծումը և «սեփականության մասնագետների»՝ միջին խավի ներկայացուցիչների, ստեղծումը: Պետական սեփականության փաթեթը նշանակում էր, որ յուրաքանչյուր լեհ ընտանիք կունենար մասնավոր սեփականության իրավունք, որը մոտ ապագայում կկարողանար օգտագործել ֆոնդային շուկայում[18]:

Լևանդովսկին և Շոմբուրգն առաջ քաշեցին այն գաղափարը, որ 18 տարեկանից բարձր Լեհաստանի քաղաքացիություն ունեցող բոլոր ֆիզիկական անձինք պետք է ունենան վերամասնավորեցման իրավունք: Նրանք կստանային 2 միլիոն զլոտի (ներկայիս փոխարժեքով՝ 40 ֆունտ ստերլինգ) անվանական գույքային արժեթուղթ: Դրանք կարող էին օգտագործվել միայն համարժեք

[17] **Lewandowski J., Szomburg J.,** Property as a threshold for economic reform. Economic Alternative, *Political Review,* 1991, 14, p. 25.
[18] Նույն տեղում:

բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով: Վաուչերի սեփականատերը կկարողանար ընտրել այն պահը, երբ կհայտնվեր ֆոնդային բորսայում որպես պոտենցիալ բաժնետեր՝ նախապես իմանալով վերամասնավորեցման հաստատված ժամանակացույցը և ֆոնդային բորսայում առանձին ընկերությունների ներկայացման ամսաթվերը: Բացի սովորական արժեթղթերից ընկերությունն աշխատակիցներին տրամադրելու էր նաև արտոնյալ արժեթղթեր: Այդ ընկերությունն իր վրա պետք է վերցներ վաուչերի թողարկման ծախսերը կամ դրանք ձեռք բերեր զեղչով՝ այդպիսով ապահովելով ձայների համապատասխան քանակ բաժնետերերի ժողովի ժամանակ: Վերոնշյալն իրավական ձևակերպում ստացավ Լևանդովսկու և Շոմբուրգի՝ պետական ներդրումային հիմնադրամների և դրանց սեփականաշնորհման վերաբերյալ 1993թ. ապրիլի 30-ի ակտով (*Ustawa z dnia 30 kwietnia 1993r. o narodowych funduszach inwestycyjnych i ich prywatyzacji*): Օրենքով նախատեսվում էր պետական սեփականություն հանդիսացող ընկերությունների մոտ հինգ տոկոսի վերափոխում առևտրային իրավաբանական ընկերությունների և դրանց բաժնետոմսերի փոխանցում ազգային ներդրումային հիմնադրամներին: Նախատեսվում էր առևտրային ձեռնարկությունների բաժնետոմսերի փոխանցում երկու տեսակի հիմնադրամների.

1. Ընդհանուր ներդրումային հիմնադրամ,
2. Ներդրումների փոխհատուցման հիմնադրամ:

Օրենքի համաձայն, ազգային ներդրումային հիմնադրամները (ԱՆՀ) պետական սեփականություն հանդիսացող ընկերություններ էին, որոնց նպատակն էր սեփականաշնորհված պետական ընկերությունների վերահսկումը: Այդ ընկերությունների բաժնետոմսերը բաժանված էին հետևյալ հարաբերակցությամբ.

1. Բաժնետոմսերի 60 տոկոսը պատկանում էր տարբեր ազգային ներդրումային հիմնադրամների: Մեկ ԱՆՀ-ի ձեռքում էր կենտրոնացած բաժնետոմսերի 33 տոկոսը, մյուս 27 տոկոսը պատկանում էր մյուս ԱՆՀ-ին, որից 15 տոկոսը տրամադրվում էր ԱՆՀ-ի ղեկավար ընկերությանը՝ որպես փոխհատուցում վերջինիս աշխատանքի դիմաց:

2. Բաժնետոմսերի 15 տոկոսը տրամադրվում էր ընկերության աշխատակիցներին:
3. Բաժնետոմսերի 25 տոկոսը վերահսկում էր կենտրոնական գանձապետարանը՝ սոցիալական ապահովության համակարգի սուբսիդավորման համար կամ որպես փոխհատուցման ֆոնդ՝ բյուջետային ոլորտի աշխատակիցների կամ թոշակառուների համար:

Բաժնետոմսերի վերոնշյալ բաժանման գնահատման ժամանակ հարկ է ուշադրություն դարձնել ԱՆՀ-ի և դրանց կառավարող խորհուրդների՝ մյուս բաժնետերերի տարածման հատկացումներին: Դրա պատճառն այն էր, որ նրանք դարձել էին առևտրայնացված բիզնեսների իրական սեփականատերեր: Բացի այդ, մասնավոր ընկերությունների աշխատակիցները կարող էին մասնակցել ինչպես ընկերության, այնպես էլ Բաժնետոմսի համընդհանուր հավաստագրի (ԲՀՀ) մասնավորեցման գործընթացին, որը համարժեք է մեկ բաժնետոմսի յուրաքանչյուր ԱՆՀ-ում: ԲՀՀ-ն համարժեք է Լեհաստանի կենտրոնական վիճակագրական գրասենյակի հայտարարած միջին ամսեկան աշխատավարձի 10 տոկոսին, իսկ մեկ քաղաքացու ստացած բաժնետոմսերի արժեքը գնահատվում է 20 հազար լեհական զլոտի (մոտ 5 ֆունտ ստերլինգ)[19]:

Ազատականացմանն ուղղված առաջարկների թվում հատուկ ուշադրության է արժանի ԲՀՀ-ը, որը պետք է անվճար տրամադրվեր այն անձանց, ովքեր 1991թ. երկրորդ կեսին կառավարությունից չէին ստացել իրենց աշխատավարձի կամ շահույթի ինդեքսացիա: Ամփոփելով ունիվերսալ մասնավորեցման ծրագիրը՝ կարելի է նշել, որ ԱՆՀ-ի և դրանց մասնավորեցման պայմանների հստակեցման ժամանակ ծրագրում լիովին անտեսվել է միջին խավի ստեղծման գաղափարը: Դրա նպատակն էր պետական ձեռնարկությունների բռնագրավումը, դրանց շուկայական դիրքերի բարելավումը և բյուջետային ոլորտում աճի բացակայության փոխհատուցումը: Ծրագրի գլխավոր թերությունը մասնավորեցման սահմանափակ շրջանակն էր, որն ընդգրկում էր այդ ժամանակ գործող պետական ձեռնարկությունների միայն 10 տոկոսը, որոնք նույնիսկ զանգվածային

[19] **Thieme J.,** Republic of Investors, *Wprost*, 1991, 3-4, p. 24.

մասնակցության դեպքում, չէին կարող ապահովել իրենց բիզնեսը ստեղծելու համար անհրաժեշտ կապիտալ: Լևանդովսկու և Շոմբուրգի առաջարկները Լիբերալ-դեմոկրատական կոնգրեսն անվերապահորեն չընդունեց: «Գդանսկի լիբերալների» մի մասն ընդգծում էր համընդհանուր մասնավորեցման ծրագրի թերությունները:

Կոնգրեսում ընդդիմության առաջնորդներն էին Լեխ և Լոնգին Մաժևսկիները, որոնք իրենց ներկայացրած ծրագրի բավարար հավանության չարժանանալու պատճառով դուրս եկան Կոնգրեսից և միացան Ալեքսանդր Հոլլի Պահպանողական կուսակցությանը: Որպես Կոնգրեսի անդամներ, նրանք առաջ էին քաշել առևտրայնացման նախագիծ (հունիսի 17, 1992թ.)՝ որպես Լևանդովսկու և Շոմբուրգի ներկայացրած ծրագրի այլընտրանք: Մաժևսկիների զանգվածային և համընդհանուր մասնավորեցման ծրագրի հիմնական դրույթներն էին.

1. Վարկային վաուչերների համակարգ,
2. Մասնավորեցման իրավունքների ռեգիոնալիզացիա,
3. Ֆոնդային բորսաների ռեգիոնալիզացիա,
4. ԱՆՀ-ի օգտագործում մասնավորեցման նպատակով:[20]

Վարկային վաուչերների հեղինակները հիմք էին ընդունել Լեխ Վալենսայի «բոլորի համար 100 միլլիոն զլոտի» գաղափարը (ներկայիս փոխարժեքով 10 հազար լեհական զլոտին համարժեք է մոտ 2 հազար ֆունտ ստերլինգի): Ըստ Վալենսայի, յուրաքանչյուր չափահաս քաղաքացի իրավունք ուներ ստանալ 10 հազար դոլլարի վարկ, որը պետք է մարեր 20 տարվա ընթացքում: Առաջին տասը տարիների համար տոկոսներ չէին սահմանվելու, իսկ 11-րդ տարվանից սկսած՝ տարեկան 10 տոկոս տոկոսադրույք: Վարկը վաղաժամկետ մարելու դեպքում քաղաքացին կարող էր ապահովել ավելի ցածր ներդրումային ծախսեր: Վալենսայի հայեցակարգում, որը փոխառել էին Մաժևսկի եղբայրները, տրամադրված գումարը կարող էր օգտագործվել պարտքերի մարման, պետական և կոմունալ գույքի ձեռքբերման, ինչպես նաև առևտրային ձեռնարկությունների բաժնետոմսերի ձեռքբերման համար[21]: Ըստ այդ հայեցակարգի, մասնավորեցման ողջ

[20] **Mażewski L.,** Mass and Universal Privatization, Wydawnictwo Trio, Gdansk, 1993, p.32.
[21] **Mażewski L.,** Privatization on Credit, *Dziennik Bałtycki*, 1992, 42, p. 19.

գործընթացը պետք է դառնար առանձին միավորների տիրույթ՝ ներառելով Լեհաստանի մի շարք վոյեվոդություններ (խոշորագույն վարչական միավորներ), որոնցից գանձվելու էր ձեռնարկությունների առևտրայնացումից ստացվող եկամուտների 20 տոկոսը:

Կոնգրեսի պահպանողական մոդելի համաձայն, մասնավորեցումը պետք է իրականացվեր վերամասնավորեցման օրինագծերի, ինչպես նաև, հնարավորության դեպքում, վերադարձերի միջոցով: Սեփականության վերադարձի իրավունք վերապահված էր Արժեթղթերի ազգային ֆոնդին, որն իրավունք ուներ փոխանակել վերամասնավորեցման վաուչերները առևտրային ձեռնարկությունների բաժնետոմսերով (կենտրոնական մակարդակում) կամ ֆինանսական ակտիվներով (տեղական մակարդակում):

Մաժևսկի եղբայրների ծրագիրն անդրադառնում էր նաև կենտրոնական և տարածքային ֆոնդային բորսաների սահմանազատմանը: Դա հնարավորություն էր տալու մուտք գործել փոքր և ոչ այնքան հայտնի մասնավոր և պետական ընկերությունների կապիտալի շուկաներ, որոնց համար պետք է սահմանվեին շուկա մուտք գործելու ավելի մեղմ պայմաններ: Միաժամանակ, կենտրոնական մակարդակում նրանք ենթարկվելու էին բոլոր սահմանափակումներին:

Լիբերալ-դեմոկրատական կոնգրեսի ծրագիրը նախատեսում էր նաև ԱՆՀ-ի ձևավորման և գործարկման կանոնների փոփոխություններ: Դրանց արդյունքում ԱՆՀ-ները պետք է դառնային Գանձապետարանի և կառավարող ընկերությունների բաժնետիրական ընկերություններ: Քաղաքացիները կարող էին ներդնել վարկային փաթեթներ ընտրված ֆոնդում, ինչն, իր հերթին, կխթաներ ներդրողների միջև մրցակցությունը: Գաղափարի հեղինակները պնդում էին, որ վարկերի համատարած տրամադրման արդյունքում կձևավորվի միջին խավ: Ըստ Մաժևսկիների, դրա շնորհիվ Լեհաստանի վերափոխումը տեղի կունենա ոչ թե կառավարման արդյունքում, այլ այն ուժերի շնորհիվ, որոնք հետաքրքրված են «ժողովրդական կապիտալիզմի» պաշտպանության և ամրապնդման հարցերով: Նրանք

հավատում էին, որ «սեփականության հեղափոխությունը» կհանգեցնի անհատական և կոլեկտիվ շահերի միավորմանը[22]:

Այդպիսով, Կոնգրեսի պահպանողական ծրագիրը ենթադրում էր համընդհանրություն, չնայած այն հանգամանքին, որ կարևորվում էր առավել ակտիվ սուբյեկտների մասնակցությունը, մասնավորապես, այն քաղաքացիների, ովքեր կարող էին կրկնապատկել կապիտալը և այն վերադարձնել առավելագույնը քսան տարի անց: Ծրագիրը որևէ առավելություն չէր տալիս մասնավոր ձեռնարկությունների աշխատակիցներին կամ ղեկավար մարմիններին: Հեղինակները կարող են պնդել, որ ծրագրի նպատակն էր ստեղծել միջին խավ՝ օգտագործելով քաղաքացիներին առավելագույնս մոտ ռեգիոնալ մեխանիզմներ: Հարկ է նաև նշել մասնավորեցման և վերամասնավորեցման համադրման խնդիրը, որը Լևանդովսկին և Շոմբուրգն անտեսում էին:

1989թ. հետո միջին խավի ստեղծմանն ուղղված լիբերալ մասնավորեցման նախագծերի ներկայացումը Լեհաստանում թույլ է տալիս պատասխանել հոդվածի սկզբում նշված հարցադրումներին: Լիբերալ նախագծերը հաստատում են հետևյալ կանխավարկածը. «Գդանսկի լիբերալները» կարծում էին, որ միջին խավ ստեղծելու, որն այդ ժամանակ սահմանափակված էր ձեռնարկատերերով, և լեհ հասարակության կառուցվածքում այն ամրապնդելու լավագույն ճանապարհը քաղաքացիներին կապիտալ տրամադրելն է: Ենթադրվում էր, որ նրանք դա կօգտագործեն սեփական բիզնեսի ստեղծման և զարգացման նպատակով:

Լևանդովսկու և Շոմբուրգի մասնավորեցման նախագիծը բացարձակ պարտություն կրեց ոչ միայն Լեհաստանում, այլև ԱՆՀ-ներում, դրանց ղեկավար ընկերություններում և առևտրայնացված ընկերություններում: Մաժեսկի եղբայրների առաջ քաշած ծրագիրն ավելի լավ լուծում էր առաջարկում: Դա հնարավորություն էր տալիս ներգրավել բոլոր լեհերին՝ ապահովելով կապիտալ՝ արտոնյալ վարկի տեսքով: Դա պարզապես գումարի բաշխում չէր, քանզի վարկառուն ունենում էր պարտք, որը պետք է մարեր առավելագույնը 20 տարում: Համատարած և համընդհանուր մասնավորեցումը կարևորում էր

[22] **Mażewski L.,** Mass and Universal Privatization..., էջ 56:

ձեռնարկատիրությունը, պատասխանատվությունը, առանց կապիտալիզմի զարգացումը և միջին խավի ձևավորումը: Մասնավորեցման արդյունքները շատ ավելի համեստ էին, քան ակնկալում էին լիբերալները: Համընդհանուր մասնավորեցման արդյունքում քաղաքացիները ստանում էին ներկայիս փոխարժեքով 20 զլոտի արժողությամբ վաուչեր, որը բավարար չէր բիզնես ծավալելու կամ էական ներդրումներ ապահովելու համար: Ընդհանուր ավանդային հավաստագրերը հաճախ վաճառվում էին միևնույն բանկում՝ դրանց ձեռքբերումից որոշ ժամանակ անց: Անժամկետ ուզուֆրուկտուսը (ուրիշի գույքի և դրանից ստացված եկամուտների օգտագործման իրավունք՝ դրա ամբողջականությունն ու տնտեսական նշանակությունը պահպանելու պայմանով), կոոպերատիվ և համայնքային սեփականությունը միայն մի քանի օրինակներ են այն ոլորտների, որոնց մասնավորեցումը կասեցվել է:

Միջին խավի զարգացումը տեղի ունեցավ առանց քաղաքական էլիտաների, այդ թվում՝ լիբերալիզմի այն ներկայացուցիչների աջակցության, որոնք հետաքրքրված էին ձեռնարկությունների առևտրայնացումից ստացվող շահույթով: Դա իրականացվեց փոքր բիզնեսի շրջանակներում՝ առևտուր, ծառայություններ, փոքր արտադրություն: Ներկայիս մանր ձեռնարկատերերը սկսեցին իրենց բիզնեսը Մ. Ռակովսկու և Մ. Վիլչկայի տնտեսական օրենքների ներմուծմամբ և զարգացրեցին դրանք առանց մասնավոր ընկերությունների կապիտալի ներհոսքի: Մասնավորեցումն ինքնին ապահովեց լեհերի բաժանումը՝ փոփոխության շահառուների դասի և նրանց, ովքեր արդեն ապահովել էին իրենց սեփական դիրքերը: Դժգոհության ալիքը հիմք դարձավ այն կուսակցությունների համար, որոնք ուզում էին հասնել իշխանության:

Ներկայացված հայեցակարգային թերությունների հեղինակները ցանկանում էին ձևավորել լեհ հասարակությունն՝ իրենց ցանկություններին ու պատկերացումներին համապատասխան: Նրանց որդեգրած ռազմավարությունն արդյունավետ չէր: Պետության մասնակցությունը տնտեսական և սոցիալական վերակառուցման գործընթացին սահմանափակելու փոխարեն նրանք իրականացնում էին ակտիվ տնտեսական ու սոցիալական պետական քաղաքակա-

նություն: Նրանք չկարողացան թեթեւացնել միջին խավի ուսերին ընկած բեռը: Լիբերալներն այդ բեռը համարում էին երաշխիք իրենց զարգացման համար անհրաժեշտ միջոցներ ապահովելու գործում: Լեհաստանում միջին խավը փաստացի ծնունդ առավ լիբերալների շրջանակից դուրս:

Ռեգիոնալիզմ. «Գդանսկի լիբերալների» որոշ ներկայացուցիչներ, այդ թվում՝ Տուսկը, ունեին հակասական դիրքորոշում Լեհաստանի նկատմամբ: Տուսկը նշում էր. «Լեհականությունը անոմալիա է, այն առաջացնում է ապստամբության տրամադրություններ: Պատմությունը, աշխարհագրությունը, պատմական անհաջողությունների բեռն ընկել է իմ ուսերին, որը ես մեծ ցանկություն չունեմ տանել, բայցևայնպես անկարող եմ չտանել: Այրել խորհրդանիշը և դա անել հպարտորեն»[23]: Հայրենիքի նկատմամբ այս երկակի վերաբերմունքը պայմանավորված էր «Գդանսկի լիբերալների» ազգային հատվածի երկակի ինքնությամբ: Նրանց մեծ մասը կաշուբներ* էին կամ ունեին կաշուբական ծագում, այդ թվում նաև՝ Տուսկը և Շոմբուրգը:

«Գդանսկի լիբերալների» համար Լեհաստանի առջև ծառացած խնդիրները հնարավոր էր լուծել ռեգիոնալիզմի միջոցով: Նրանք գտնում էին, որ վերջինս ավելի լայն հասկացություն է, քան ֆոլկլորը, ֆոլկը և ծիսակատարությունը: Վրդովմունքը պատճառ դարձավ, որ վերջիններս ռեգիոնալիզմի գաղափարը սահմանափակեն միայն մշակութային ոլորտով[24]: «Գդանսկի լիբերալները» ռեգիոնալիզմը համարում էին քաղաքական շարժում՝ միտված պաշտպանելու այն արժեքները, որոնք վտանգված էին կենտրոնական կառավարության, առաջընթացի, հավասարության և միավորման պատճառով[25]:

Ռեգիոնալիզմի տեսանկյունից Պոմերանիան և ինքնակառավարման այլ նկրտումները դիտարկվում էին ոչ թե որպես ապստամբություն կենտրոնի դեմ, այլ ամբողջ պետության ներսում տեղի

---

[23] **Tusk D.,** The Broken Pole, *Znak*, 1987, No. 11-12, 12-15.

* Գդանսկում և հարակից առափնյա տարածքներում բնակվող լեհական էթնիկ խմբի ներկայացուցիչներ:

[24] Confused in Action - Regionalism Today, *Pomerania.Socio-Cultural Monthly*, 1998, 12, p. 14; **Tusk D.,** Vision …, էջ 17:

[25] Նույն տեղում:

ունեցող բարեփոխումների գործընթացին ակտիվ մասնակցություն[26]: Փոքր հայրենիքի ինքնավարությանը պետք է հասնել ոչ թե Լեհաստանի, այլ կենտրոնական բյուրոկրատիայի միջոցով[27]: Տուսկն առաջարկում էր.

1. Ամրապնդել ռեգիոնալ կազմակերպությունների գործարկման ձևերը՝ ռեգիոնալ մշակույթի խթանման և ապագա տեղական ինքնակառավարման մարմինների ինքնակրթության միջոցով,
2. Նախաձեռնել կրթական քարոզարշավներ, որոնք ցույց կտան կենտրոնացված պետական մոդելի վտանգները և իշխանության ապակենտրոնացումից բխող հնարավորությունները,
3. Հաստատել ռեգիոնալ միավորների միջև ավելի սերտ համագործակցություն,
4. Մեծացնել լոբբիստական գործունեության արդյունավետությունը Սեյմում եւ Սենատում,
5. Հաստատել կապեր ձեռնարկատիրական շրջանակների հետ և, մասնավորապես, առևտրային ռեգիոնալ պալատների և մասնավոր կապիտալի ակումբների հետ: «Ձեռնարկատիրական շրջանակները մեծ մասամբ հետաքրքրված են տեղական կառավարման դերակատարությունը մեծացնելու խնդրով, քանզի ապակենտրոնացումը ապահովում է ավելի մեծ հնարավորություններ՝ հարկատուների ֆինանսների արդյունավետ վերահսկման համար»[28],
6. Մշակել հատուկ տնտեսական ծրագիր, որում հաշվի կառնվի առանձին ռեգիոններում տիրող իրավիճակն ու դրանց ներուժը,
7. Նախապատրաստվել ընտրական քարոզարշավների այն կուսակցությունների հետ, որոնք պատրաստ են իրականացնել ռեգիոնալիզմի գաղափարները[29]:

Լեխ Մաժևսկու՝ «Կառավարման ռեգիոնալիզմի» ծրագիրը ռեգիոնալ ինքնակառավարման գաղափարն իրականություն դարձնե-

---

[26] Pomeranian Regional Idea, Paper presented at the 2nd Kashubian Congress, *Pomerania. Socio-Cultural Monthly*, p. 2.

[27] Strong Regions - a Strong Country, *Pomerania. Socio-Cultural Monthly*, 1992, 4, p. 7.

[28] Pomeranian Regional Idea..., էջ 11:

[29] Նույն տեղում:

լու փորձ էր: Գաղափարը հիմնված էր վարչական գործունեության ապակենտրոնացման վրա՝ ժողովրդավարության և տվյալ ինքնակառավարման միավորի գործարկմանը քաղաքացիների մասնակցության սկզբունքների հիման վրա: Վերջինս պետք է ներառեր մասնակցություն համայնքային և մարզային խորհուրդների ներկայացուցիչների ընտրություններին, ինչպես նաև շահերի խմբերի գործունեություն՝ ուղղված կոնկրետ համայնքների շահերի բավարարմանը: Մաժևսկու ծրագրի համաձայն, ժողովրդավարությունը չէր սահմանափակվում միայն ասամբլեաների կամ խորհուրդների ներկայացուցիչների ընտրությամբ: Այն ներառում էր նաև նրանց միջև համագործակցության ձևի որոշումը: Հատկանշական է, որ ինքնակառավարման համակարգը չէր նախատեսում վոյեվոդությունների և առանձին շրջանների միջև միջանկյալ միավորների գոյություն:

Ծրագրի առանցքային կետը քաղաքապետարանի հատուկ (ինքնավար) և պետության կողմից վերապահված իրավասությունների սահմանազատումն էր: Առաջինի դեպքում քաղաքապետարանը գործում էր կենտրոնական իշխանություններից անկախ: Քաղաքապետարանի կազմում էին.

1. Ներկայացուցչական ասամբլեան՝ խորհուրդը,
2. Գործադիր մարմինը՝ քաղաքային խորհուրդ, քաղաքապետարանների խորհուրդ,
3. Քաղաքապետարանի գլուխը՝ քաղաքապետը,
4. Վարչական անձնակազմը:

Ներկայացուցչական ասամբլեայի և գործադիր մարմնի անդամների թիվը կախված էր լինելու տվյալ ինքնակառավարվող միավորի բնակչության թվից: Քաղաքային խորհուրդների անդամների ժողովրդավարական ընտրությունը պետք է անցկացվեր բացարձակ մեծամասնական ընտրակարգով՝ երկու փուլով: Թեկնածուին անհրաժեշտ էր լինելու հավաքել տվյալ ընտրատարածքում վավեր քվեների կեսից ավելին: Ասամբլեան գլխավորելու էր քաղաքապետը, ով ունենալու էր խորհրդատվական կամ վճռորոշ ձայն՝ կախված այն բանից, թե արդյոք նա խորհրդի անդամ է, թե ոչ: Խորհրդի նիստը գումարող մարմինը հենց խորհուրդն էր: Ծրագիրը ենթադրում էր տեղական խորհրդի հարցերում ընդհանուր իրավասությունների

բաժանում: Խորհուրդը նաև իրավունք ուներ ներկայացնել տեղական ակտեր: Կենտրոնական իշխանությունը կարող էր խորհրդատվություն տալ քաղաքապետարանին՝ օրենքի կարգով սահմանված իր իրավասությունների վերաբերյալ: Խորհուրդը նման էր լինելու կոլեգիալ խորհրդին, բացառությամբ այն բանի, որ խորհրդի առանձին անդամներ չէին ունենալու առանձին իրավունքներ: Խորհրդի անդամներին վերահսկելու էր քաղաքապետը: Գործադիրի ընտրություններն անցկացվելու էին ժողովրդավարական ճանապարհով ընտրված խորհուրդներում՝ վերջինիս անդամներից՝ պաշտոնավարման հստակ ժամկետով: Կառավարող խորհուրդը պետք է գործեր ընթացակարգի կանոններին համապատասխան՝ գործադիրի նշանակվելուց հետո: Դրա հիմնական գործառույթների թվում էին լինելու անհրաժեշտության դեպքում խորհրդի որոշումների իրականացումը, ինչպես նաև քաղաքապետարանի ընթացիկ հարցերի վերաբերյալ պարբերական զեկուցումները:

Քաղաքապետը նշանակելու և արձակելու էր խորհուրդը՝ անորոշ ժամկետով: Այդ պաշտոնի համար թեկնածուներն առաջադրվելու էին խորհրդի և մարզպետի հետ խորհրդակցելուից հետո: Քաղաքապետը, չլինելով խորհրդի անդամ, նախագահելու էր խորհուրդը և ունենալու էր վճռորոշ ձայն: Խորհուրդն ունենալու էր միայն խորհրդատվական դերակատարություն: Այն նաև լինելու էր տվյալ համայնքի և կենտրոնական կառավարության ներկայացուցիչն, ինչպես նաև վարչական անձնակազմի ղեկավարը: Վերջինիս անդամների թիվը կախված էր լինելու տեղական ինքնակառավարման միավորի տարածքի չափից[30]: Վոյեվոդի և կենտրոնական իշխանության նկատմամբ վերահսկողական միջոցներ կիրառվելու էին միայն ոչ իրավաչափ ակտերի առնչությամբ: Ծրագրում տարածքային բաժանման միջին մակարդակը վոյեվոդությունն էր: Վերջինիս կառավարումն իրականացնելու էին վճռաբեկ և խորհրդատվական ասամբլեաները: Վոյեվոդությունը ղեկավարելու էր վոյեվոդը, ով, իր հերթին,

[30] **Mażewski L.,** New System of Local Authorities, Presentation presented at the 1st Gdansk Congress of Liberals, 10 - 11 December 1988, *Pomerania. Socio-Cultural Monthly*, 1989, 3, p. 17.

ենթակվելու էր վարչական անձնակազմին: Վճռաբեկ ասամբլեան կազմված էր լինելու հետևյալ անդամներից.

1. Վոյեվոդությունում ընտրված պատգամավորներ,
2. Վարչապետի հայցմամբ նախագահի առաջադրած ավագանիներ, որոնք ընտրվելու էին տվյալ վոյեվոդության համար հատուկ նշանակություն ունեցող քաղաքացիներից,
3. Ժողովրդավարական ընտրություններում քաղաքացիների ընտրած ավագանիներ, որոնք կրկնակի գերազանցելու էին օրենսդիր ասամբլեայի անդամների երկու խմբերի թվաքանակը:

Ըստ Լեխ Մաժևսկու, համայնքային խորհրդի պատգամավորները պետք է ապահովեին կառավարության ու տեղական իշխանությունների միջև կապը, իսկ նախագահի նշանակած ավագանիները՝ իշխանությունների և հասարակության միջև փոխզիջումը: Չընտրված ավագանին ունենալու էր սերտ կապ պատգամավորական մանդատի հետ: Խորհրդարանում իր տեղը կորցնելուց հետո նա նաև զրկվելու էր խորհրդում տեղ զբաղեցնելու իրավունքից: Վոյեվոդության ավագանիների թիվը պետք է հավասար լիներ համայնքային ասամբլեայի անդամների թվին՝ կախված տվյալ տարածքային միավորի բնակչության ընդհանուր թվաքանակից: Քաղաքապետարանի խորհրդին զուգահեռ վոյեվոդության խորհրդին բնորոշ էր մարզային հարցերում իրավասությունների ընդհանուր բաժանումը: Վոյեվոդության առևտրային պալատը կազմված էր լինելու երեք դասի անդամներից.

1. Անդամների կեսը գործատուների կազմակերպությունների, արհմիությունների, առևտրային պալատի, տարբեր արհեստների ու մասնագիտությունների ներկայացուցիչներ էին,
2. Քսանհինգ տոկոսն աշխատում էր միայն տվյալ վոյեվոդությանը հատուկ ձեռնարկություններում,
3. Քսանհինգ տոկոսը բնապահպանության, առողջապահության, կրթության և մշակույթի հետ առնչվող կազմակերպությունների ներկայացուցիչներ էին[31]:

Առևտրային պալատն ունենալու էր միայն խորհրդատվական գործառույթ: Վոյեվոդությունը, իր հերթին, լինելու էր վոյեվոդության ինքնակառավարման գործադիր մարմինը, որը չէր ունենալու վետոյի

[31] **Mażewski L.,** New System..., էջ 18:

իրավունք խորհրդի վճիռների վրա: Վոյեվոդության հարցերի նկատմամբ նրա գործառույթների շրջանակը լինելու էր նույնը, ինչ քաղաքապետարանի դեպքում էր: Վոյեվոդությունների կառավարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու էր Լեհաստանի խորհրդարանի երկու պալատների համատեղ հանձնաժողովը: Ներկայացված ծրագրի նպատակն էր սահմանել ինստիտուցիոնալ արգելք նախագահի իշխանության վրա: Դա թույլ էր տալու չեզոքացնել վերակառուցման բացասական հետևանքները տարբեր տեղական համակարգերի վրա, ինչպես նաև մոբիլիզացնել տեղական ռեսուրսները՝ հնարավորություն տալով տեղական ինքնակառավարման մարմիններին ստանձնել սոցիալական քաղաքականության իրականացումը և ապահովել կոլեկտիվ սպառման կազմակերպումը[32]:

Լիբերալ հեղափոխություն. Ըստ Կ. Օլեչնիցկու և Պ. Զալեցկու սոցիոլոգիական բառարանի, հեղափոխությունը

1. Ուժային և արմատական փոփոխությունների գործընթաց է, որը ենթադրում է հեղաշրջում, կտրուկ անցում զարգացման մի փուլից մյուսը, էվոլյուցիայի հակադիր հայեցակարգ:
2. Սոցիալական կազմակերպման, ինչպես նաև պետական համակարգի, ազգի, հասարակության ձևի բռնի փոփոխություն, որը, որպես կանոն, ուղեկցվում է քաղաքական էլիտան փոխելու զինված փորձերով[33]:

Հետազոտողները «հեղափոխություն» եզրույթը սահմանելիս հաշվի են առնում նաև զանգվածային մասնակցության չափանիշը, որը հեղափոխությունը տարբերակում է ապստամբությունից[34] և հեղաշրջումից[35]: Հեղափոխությանը բնորոշ առանձնահատկություններ են.

1. Բռնություն՝ անսպասելի և արագ,
2. Ծայրահեղականություն՝ արմատական փոփոխություններ սոցիալական կյանքում,

---

[32] **Mażewski L.,** Democratic Capitalism..., էջ 21:

[33] **Olechnicki K., Załęcki P.,** Sociological Dictionary, Wydawnictwo Uniwersytetu Torunskiego, Toruń, 1999, p. 177.

[34] **Topolski J.,** Revolution in Modern and Modern History, *The Quarterly of History*, 1976, 2, p. 81.

[35] **Kolakowski L.,** Revolution as a Beautiful Disease, (in): Idem, “Can the Devil Be Saved and 27 Other Sermons”, Wydawnictwo Trio, London, 1984, p. 101.

3. Զանգվածայնություն՝ մեծ թվով մասնակիցներ,
4. Սոցիալական էլիտաների փոփոխություն՝ որպես հաջող հեղափոխության արդյունք,
5. Մարդկանց խմբի մտավոր գործընթացի, վարքի կամ ֆիզիկական վիճակի վրա ճնշումների գործադրում՝ առանց նրանց համաձայնության:
6. Փոփոխության սոցիալական հարթություն, որը ներառում է սոցիալական կյանքի բոլոր ոլորտները,

Վերոնշյալին հարկ է ավելացնել ևս մեկ առանձնահատկություն.

7. Էմոցիոնալ և ինտելեկտուալ արձագանքները, այդ թվում՝ զանգվածային մոբիլիզացում, խանդավառություն, ուրախություն, լավատեսություն, հույս, իշխանության ձգտում, ապագայի վերաբերյալ ուտոպիստական պատկերացումներ և այլն:[36]

Քանի որ լիբերալիզմի փիլիսոփայությունն ընդունում է հասարակության փոփոխության էվոլյուցիոն մոդելը, հեղափոխությունն, իր վերը նշված իմաստով, չի համապատասխանում լիբերալ գաղափարներին: Ըստ լիբերալիզմի ջատագով Կարլ Փոպերի, սոցիալական փոփոխության օպտիմալ տարբերակը մասնակի սոցիալական մոդելն է, որը ներառում է հետևյալը.

1. Սոցիալական խնդիրների նկատմամբ ինստիտուցիոնալ մոտեցում, որը կենտրոնացած է առանձին ինստիտուտների գործունեության բարելավման վրա՝ խուսափելով կոլեկտիվ նպատակներից[37],
2. Փոքրամասշտաբ սոցիալական փորձարկում, որը վերաբերում է կոնկրետ ժամանակահատվածում մեկ ինստիտուտում ընթացող աստիճանական սոցիալական փոփոխություններին[38],
3. Ռացիոնալիզմը ենթադրում է մասնակի փոխզիջում և քննադատության ընդունում՝ թույլ տալով կենտրոնանալ անուղղակի նպատակների վրա և շրջանցել վերջնական լուծումը:

---

[36] **Sztompka P,** Sociology of Social Change, Wydawnictwo Uniwersytetu Jagiellonskiego, Cracow, 2005, p. 279.
[37] **Popper K. R.,** Open Society and its Enemies, Wydawnictwo Uniwersytetu Warszawskiego, Warsaw, 1993, **1**, p. 120.
[38] **Popper K. R.,** նշվ. աշխ., էջ 125:

«Լիբերալ հեղափոխություն» հասկացությունն ունի ներքին հակասություն Փոպերի առաջադրած լիբերալ գաղափարների հետ: Այն գործածության մեջ դրեցին «Գդանսկի լիբերալները»[39]:

Լիբերալիզմը տարածելիս՝ Տուսկը գիտակցում էր, որ լիբերալ գաղափարները չեն կարող կիրառվել իրական սոցիալիզմի պայմաններում, քանզի լիբերալ ժառանգությունն անհնար է ընդունել առանց քննադատության. ժողովրդավարական հասարակությունների ծրագրերի պարզ փոխանցումը մի երկրից մյուսն անհնար էր: Լիբերալիզմի որդեգրումը՝ որպես քաղաքական գործունեության գաղափարական հիմք, աննախադեպ փորձարկում է, որը պահանջում է առանձնահատուկ, մեկնաբանելի և կոնկրետ գործողություններ[40]: «Լիբերալ հեղափոխություն» հասկացությունը կարող է դիտարկվել որպես նոր երևույթ՝ ուղղված վերափոխելու լիբերալ ավանդույթները: Այդ գաղափարը լայն տարածում չի ստացել, սակայն կարող է պայմանականորեն ներառվել գործունեության բոլոր այն ձևերում, որոնք չեն տեղավորվում սոցիալական փոփոխության էվոլյուցիոն հայեցակարգի շրջանակներում[41]: Դրանք են.

1. Օրենքի հետ անհամապատասխանություն, մասնավորապես՝ հրապարակումների, շրջանակների, խմբերի, կուսակցությունների աշխատանք՝ ուղղված մոբիլիզացնելու ժողովրդին զանգվածային գործողությունների, ինչպիսիք են ցույցերն ու գործադուլները: Դրա նպատակն է տեղեկանալ նոր սոցիալական վերակառուցման առաջարկների մասին՝ միաժամանակ համագործակցելով բոլոր նրանց հետ, ովքեր պաշտպանում են ազատ Լեհաստանի գաղափարը[42]:
2. Իշխանության վրա ճնշումների գործադրում. սոցիալական ոլորտի իշխանության պառակտում, որը պետք է իրականացվի մի կողմից սոցիալական ճնշումների, հարկադրանքի կիրառ-

[39] **Popper K. R.,** նշվ. աշխ., էջ 127:
[40] **Tusk D.,** The Right to Politics, *Political Review*, 1989, 12, p. 24.
[41] **Popper K. R.,** նշվ. աշխ., էջ 140:
[42] **Barycz A.** (D. Tusk), Why? Review, *Political Review*, 1984, 2, p. 2.

մամբ, մյուս կողմից՝ սոցիալական, տնտեսական և քաղաքական ենթակառուցվածքի զարգացմամբ[43]:

1989թ. հետո «լիբերալ հեղափոխություն» եզրույթը սկսեց վերաբերել արմատական տնտեսական փոփոխություններին: Գադոմսկին՝ այդ դիրքորոշման ներկայացուցիչը, նշում էր, որ «Էվոլյուցիայից անցումը լիբերալ հեղափոխության թվում է անխուսափելի, քանզի, ըստ էվոլյուցիոն սցենարի, բարեփոխումները շարունակելու հնարավորությունները սպառվել են»[44]: Նա նաև ընդգծում էր, որ, չնայած տնտեսության մեջ շուկայական մեխանիզմների ներմուծմանը, դրանում գերակշռում էին պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունները, որոնց գործունեությունը զգալիորեն տարբերվում էր մասնավոր ձեռնարկությունների գործունեությունից[45]: Գադոմսկին գտնում էր, որ «լիբերալ հեղափոխությունը» չի կարող իրականացվել ժողովրդավարական ճանապարհով[46]: Դրան հնարավոր է հասնել միայն կապիտալիստական փոփոխությունների շահառուների աջակցությամբ: Այդ դասի ստեղծումը չպետք է ստորադասել մասնավորեցմանն ու տնտեսական քաղաքականությանը: Գադոմսկին նշում էր, որ ձեռնարկատերերին պետք է տրամադրվեն ցածր տոկոսադրույքով վարկեր, նույնիսկ եթե դա հակասում է հակաինֆլյացիոն քաղաքականությանը: Պետք է արտոնյալ հնարավորություններ ընձեռել նրանց, ովքեր ցանկանում են դառնալ ձեռնարկատեր[47]: Ինչպես ցույց է տրվում հոդվածում, «Գդանսկի լիբերալները» «լիբերալ հեղափոխություն» հասկացությունն օգտագործում էին այլ իմաստով, քան հասարակական գիտությունների դեպքում է: Հեղափոխությունը սահմանելիս նրանք հաշվի չէին առնում դրան բնորոշ մի շարք առանձնահատկություններ.

1. Բռնություն: Տուսկը ժխտում էր բռնության դերակատարությունը լիբերալ հեղափոխության մեջ հետևյալ հաստատագրմամբ. «Մեր սերնդի ընդդիմության քաղաքական ոգին

[43] **Tusk D.,** The Right..., էջ 32:
[44] **Gadomski W.,** Liberal Revolution, *Political Review*, 1991, p. 9.
[45] **Gadomski W.,** նշվ. աշխ., էջ 10:
[46] **Gadomski W.**, նշվ. աշխ., էջ 11:
[47] **Gadomski W.**, նշվ. աշխ., էջ 13:

ակնհայտորեն փոխվում է: Մինչև վերջերս մենք ունեինք արմատական, հեղափոխական, բռնի հեղաշրջումն արդարացնող գաղափարներ, սակայն այսօր մենք պատրաստ ենք կարևորել այնպիսի արժեքներ ու հայեցակարգեր, ինչպիսիք են քաղաքական և քաղաքացիական պատասխանատվությունը, քաղաքական մշակույթը, միտքը, չափավորվածությունը, կանխատեսելիությունը և այլն»[48],

2. Փոփոխության սոցիալական հարթություն: «Գդանսկի լիբերալները» կարևորում էին քաղաքական և տնտեսական ոլորտները՝ շրջանցելով մշակութային ոլորտը, իսկ 1990-ական թվականներին սահմանափակվում էին միայն տնտեսական ոլորտով[49],
3. Սոցիալական էլիտայի վերափոխում: «Գդանսկի լիբերալների» գլխավոր նպատակներից էր ոչ թե նախորդ սոցիալական էլիտայի տապալումն, այլ միջին խավի ստեղծումը[50],
4. «Գդանսկի լիբերալները» լիովին անտեսում էին բռնությունը,
5. Հեղափոխության արմատական կայունությունը սահմանափակված էր տնտեսական ոլորտով[51]:

Հարկ է նաև անդրադառնալ «Գդանսկի լիբերալների» դիրքորոշմանը

6. զանգվածայնությանը. հեղափոխության այս առանձնահատկությունը հաստատված է:
7. էմոցիոնալ արձագանքներին, որոնք խթան կդառնան լիբերալ հեղափոխության հայեցակարգում տեղի ունեցող փոփոխությունների համար[52]:

Կարելի է փաստել, որ «Գդանսկի լիբերալների» մտածողության մեջ «հեղափոխություն» եզրույթի վերաիմաստավորումը տեղի ունեցավ մի կողմից իրական սոցիալիզմի սոցիալական պայմանների պատճառով, որոնք արմատապես անհամատեղելի էին լիբերալիզմի այնպիսի արժեքների հետ, ինչպիսիք են ազատ շուկան և ժողովրդա-

[48] **Barycz A.** (D. Tusk), նշվ. աշխ., էջ 19 – 23; **Gadomski W.,** նշվ. աշխ., էջ 17:
[49] **Gadomski W.,** նշվ. աշխ., էջ 17:
[50] Նույն տեղում:
[51] **Doniecki T.,** նշվ. աշխ., էջ 11:
[52] **Gadomski W.,** նշվ. աշխ., էջ 11:

վարությունը, մյուս կողմից՝ սոցիալական փոփոխության մեջ պարտադրանքի սահմանափակման արդյունքում: Բրյուս Աքերմանն անդրադարձել է «լիբերալ հեղափոխություն» եզրույթի ձևավորմանը սոցիալական պայմանների, մասնավորապես, կոմունիզմի և ֆաշիզմի փորձի համատեքստում: Նա նշում է, որ «հեղափոխական լիբերալների նպատակը մարդկային էության արմատական վերափոխումը չէր: Լիբերալիզմի նպատակն է ոչ թե ճնշել, այլ խթանել մարդկային ձգտումների յուրօրինակ բազմազա-նությունը: Այն պաշտպանում է սոցիալական արդարության գաղափարը՝ անհատական աճի և զարգացման հնարավորությունների տրամադրման ճանապարհով[53]:

«Գդանսկի լիբերալները» և Լիբերալ-դեմոկրատական կոնգրեսը

«Գդանսկի լիբերալներն» իրենց սեփական կուսակցական ճանապարհը սկսեցին 1989թ. փետրվարի 24-ին, երբ դիմում ներկայացրեցին Գդանսկի սոցիալ-տնտեսական հանրության՝ «Լիբե-րալների Կոնգրեսի» գրանցման համար: Նրանց գաղափարական հռչակագիրը, որը ստորագրեցին «Քաղաքական ակնարկի» բոլոր առաջատար ներկայացուցիչները՝ Դ. Ֆիլարը, Յ. Լևանդովսկին, Լ. Մաժևսկին, Դ. Տուսկը, Յ. Շոմբուրգը, անցել էր ձևավորման երկար ճանապարհ[54] և ներառում էր հետևյալը.

1. Աջակցություն մասնավոր ձեռնարկատիրությանը և քաղաքա-ցիների տնտեսական գործունեության այլ ձևերին,
2. Լեհաստանի տնտեսության վերամասնավորեցմանն ուղղված գործողություններ և ֆինանսական միջոցների տրամադրում քաղաքացիներին,
3. Ձեռնարկատիրական ոգու, աշխատանքային մշակույթի և սոցիալական վստահության մթնոլորտի վերականգնում շուկա-յական ինստիտուտներում և մասնավոր սեփականության ոլորտում,

[53] **Ackerman B.,** The Future of the Liberal Revolution, Wydawnictwo Uniwersytetu Warszawskiego, Warsaw 1996, p. 16.
[54] Ideological Declaration of the Gdansk Socio-Economic Society, Congress of Liberals, *Political Review*, 1989, 12, p. 28.

4. Տնտեսական միջավայրի ինքնակազմակերպման արդյունավետ ձևերի մշակում՝ սեփական շահերի պաշտպանության նպատակով,
5. Լիարժեք գործարկվող ժողովրդավարության ապահովում կենտրոնական և ռեգիոնալ մակարդակներում,
6. Կենտրոնական քաղաքական ինստիտուտների աստիճանական ժողովրդավարացմանն ուղղված գործողություններ և սահմանադրական կարգի վերականգնում:[55]

Այս կետերի մեծ մասը 80-90-ական թվականներին հատուկ էր տարբեր քաղաքական կողմնորոշում ունեցող անձանց: Դրանց թվում են 2-րդ, 3-րդ և 4-րդ հաստատագրումները, որոնք Մ. Նովակի ժողովրդավարական կապիտալիզմի հայեցակարգի ազդեցության արդյունք էին: Հռչակագիրը քաղաքական ծրագիր չէր: Այն պետք է ուժի մեջ մտներ մեկ տարի անց՝ Լիբերալ-դեմոկրատական կոնգրեսի հիմնադիր համագումարի ժամանակ: «Քաղաքական ակնարկում» անուղղակիորեն ներառված էին հնչեղ կարգախոսներ, որոնք հետագայում կրկնվեցին "Marriot Hotel Theses"-ում (նոյեմբերի 15, 1990թ.)՝ Լևանդովսկու և Շոմբուրգի վերոնշյալ հոդվածի հետևյալ հաստատագրումներով.

- Ազատությունն ընկալվում է որպես սոցիալական կարգի առաջնային սկզբունք, որը կարող է երաշխավորվել միայն այն դեպքում, երբ կա բարոյական նորմերի նկատմամբ մշտական հարգանք[56]: Ըստ «Գդանսկի լիբերալների», ազատությունը, որը հանգեցնում է նյութական անհավասարության, այն գինն է, որը պետք է վճարվի ստեղծագործական և սոցիալական բարեկեցության համար: Դա կնպաստի քաղաքական, տնտեսական և մշակութային էլիտաների ձևավորմանը, ինչը հատկապես կարևոր է յուրաքանչյուր հասարակության զարգացման և քաղաքակրթության համար,[57]
- Մասնավոր սեփականությունը մարդու ազատության «նյութական երաշխավորն է», որն արդարացնում և սահմանափակում է

[55] Նույն տեղում:
[56] Նույն տեղում:
[57] Նույն տեղում:

սեփականության ազատությունը՝ ձևավորելով քաղաքացիական հասարակություն,[58]

- Տնտեսական վերածնունդը կարող է իրականացվել մասնավոր ձեռնարկատիրության զարգացման ճանապարհով՝ կենտրոնացված շուկայի մրցակցային համակարգում, հիմնված գործարքների ու մասնավոր սեփականության ազատության վրա:[59]

1990թ. դեկտեմբերին կայացած նախագահական քարոզարշավի ընթացքում «Գդանսկի լիբերալներին» առաջնորդում էր Լեխ Վալենսան: Վերջինս, օգտագործելով նրանց աջակցությունը (հատկապես՝ Յ. Մերկելի, Ա. Զարեբսկու և Յ. Կոզլովսկու), լիազոր ներկայացուցիչ նշանակեց Լիբերալ-դեմոկրատական կոնգրեսի քաղաքական խորհրդի նախագահ Յ. Կ. Բելեցկուն: Կոնգրեսի ազդեցությունը Վալենսայի իշխանության վրա Կոնգրեսի ընտրությունների հաջողության հիմքերից մեկն էր: Կուսակցությունը խորհրդարանական ընտրություններում ստացավ 7.5 տոկոս ձայն (հոկտեմբերի 27, 1991), ինչը նրան հնարավորություն տվեց խորհրդարանում ապահովել 37 անդամի ներկայություն (Բելեցկին ստացավ 115,000 ձայն):

Այդուհանդերձ, չնայած նրա հաջողությանը, դա գաղափարական լիբերալիզմի ավարտի սկիզբն էր: "Wprost"-ի լրագրող Բոգուսլավ Մազուրն այդ ժամանակաշրջանն անվանեց «Լիբերալների քառորդ»[60]՝ 1991թ. հունվարի 12-ից մինչև դեկտեմբերի 5-ը պետության բարձրագույն մարմիններում նրանց ներկայացուցիչների մասնակցության պատճառով: Բելեցկին դարձավ վարչապետ, Լևանդովսկին՝ սեփականության վերափոխումների նախարար, Զավիսլյակը՝ արդյունաբերության և առևտրի նախարար, Զարեբսկին՝ մամուլի խոսնակ, Բոնին՝ Աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարար, Զաբինսկին՝ վարչապետի խորհրդի գրասենյակի նախագահ, Գլեբոցկին՝ կրթության նախարար, Կոզլովսկին՝ Կառավարության մամլո ծառայության պետ, իսկ Պիսկորսկին և Մաժևսկին նշանակվեցին Նախարարների խորհրդի հատուկ խորհրդականներ:

---

[58] Program Declaration of the Liberal Democratic Congress, ***D. Tusk*** *(eds.), Ideas of Gdansk Liberalism,* Wydawnictwo Gdanskich Liberalow, Gdańsk, 1998, p. 190.

[59] Նույն տեղում:

[60] **Mazur B.,** The Quadrant of the Liberals*, Wprost*, 1991, 8, p. 13.

Բելեցկու կառավարությունը կարելի է որակել որպես վերադարձ «պրագմատիկ լիբերալիզմի», որին բնորոշ էր «այն ակնկալիքը, որ Լեհաստանում մի օր կհաստատվի լիբերալիզմ, սակայն այսօր տնտեսվարող սուբյեկտների արձագանքը շուկայի ազդանշաններին սահմանափակ է կամ շատ թույլ: Դա այլևս լիբերալ գործընթաց չէ: Այդ կառավարության նպատակն է մասնակցել շուկայական տնտեսության ստեղծման գործընթացին: Դա այնքան էլ լիբերալ կարգախոս չէ, սակայն դա է իրականությունը»[61]: Բելեցկու կառավարության գործողությունները հաճախ մեկնաբանվում էին հետևյալ կերպ՝ «Շուկայի անտեսանելի ձեռքն անհետացավ»:

Այդ ժամանակ տարածված տեսակետ կար, որ «պարադոքս է այն, որ լիբերալ գաղափարներով առաջնորդվող կառավարությունը պետք է ընդունի մի որոշում, որը բավական հեռու է լիբերալիզմից»[62]: Բելեցկու ելույթը սկսվում էր հետևյալ կերպ. «Ես ցանկանում եմ, որ նրանք, ովքեր ունեն հույս, չկորցնեն այն, իսկ ովքեր չունեն՝ վերագտնեն»[63]: Սակայն հաջորդ պարբերություններում տնտեսական եզրակացություններ են: Բարեփոխումների հստակ հռչակված նպատակն է շուկայական տնտեսության և ազատության քաղաքական ու տնտեսական հիմքերի ստեղծումը: Բելեցկին խոսում էր ոչ այնքան գործողությունների իրականացման մեխանիզմների, որքան ժողովրդի և ազատ շուկայի կողմից նրանց առաջարկած հնարավորությունների մասին: Նա իր ելույթում դիմում էր հատկապես երիտասարդներին՝ նրանց մեջ տեսնելով փոփոխության ապագա իրականացնողներին: Հատկապես ընդգծվում էր, որ միլիոնավոր քաղաքացիներ պետք է ներգրավվեն կապիտալիզմի ստեղծման գործընթացում: Կառավարու-

[61] Բելեցկին քաջ գիտակցում էր, որ Կոնգրեսն առաջընթաց է գրանցել իր շնորհիվ ("Political Review" 1991, no. 13, p. 9): Քննարկման ժամանակ, անդրադառնալով այդ հարցին, նա նշում էր հետևյալը. «Եկեք չմոռանանք, որ Կոնգրեսի քաղաքական առաջընթացն ուղղակիորեն կապված է իմ անձի, իմ առաջխաղացման հետ, այլ ոչ իմ կամ իմ կոնգրեսական քաղաքականության հետ: Պարադոքս է, որ լիբերալների և իմ անձի քաղաքական կարևորության նվազումն առավել նշանակալի վերելքներից էր»:

[62] No I have conflicts of conscience, *Interview with J. K. Bielecki,* Youth Banner, 24-26 May 1991, p.15.

[63] **Bielecki J.K.**, ***Tusk D.*** *(eds.), Ideas of Gdansk Liberalism,* p. 46.

թյան խնդիրն է բացել նոր ոլորտներ մարդկային ներուժի և ձեռնարկատիրության համար: Այդ ժամանակաշրջանում «Գդանսկի լիբերալները» սկսեցին աստիճանաբար հեռանալ համընդհանուր մասնավորեցման ծրագրից: Մտածողության մեջ փոփոխություն եղավ հատկապես «Cetniew» ծրագրի համատեքստում (մայիսի 19, 1991թ.): «Գդանսկի լիբերալների» քաղաքականությունը դարձավ ավելի ռացիոնալ և պրագմատիկ[64], ինչը դե ֆակտո նշանակում էր հեռացում համընդհանուր մասնավորեցման ծրագրից: Միջին խավի արագ զարգացման ճանապարհը սեփականության իրավունքի տարածումն է՝ ստեղծելով ազնիվ ճանապարհով հարստացման համար անհրաժեշտ պայմաններ ձեռնարկատիրության և ջանասիրության միջոցով[65]: Առաջին քայլը Լեհաստանը օտարերկրյա կապիտալի համար բացելն էր, որը պետք է մասնակցեր «համընդհանուր սեփականության կառուցվածքի վերափոխումներին և դրա համապատասխանեցմանը համաշխարհային շուկայական պահանջներին»[66]: Վերափոխումն ինքնին դադարեց լինել Կոնգրեսի գաղափարախոսության առավել կարևոր տարր, քանզի տնտեսական հաջողությունը սկսեց սահմանվել որպես «կայուն կապիտալ, արդյունաբերական և գյուղատնտեսական ապագա ռազմավարության մշակում»[67]: Լիբերալ-դեմոկրատական կոնգրեսի բացման ժամանակ «Գդանսկի լիբերալները» նշում էին. «Մենք պետք է դառնանք լեհական իրավունքը սատարող պահպանողական կուսակցություն՝ վերադառնալով մեր պետականության հանրապետական ավանդույթին»[68]: Այդ շրջանում մասնավորեցումը դարձավ միայն պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունները ներդրողներին վաճառելու միջոց՝ հաշվի առնելով նրանց ֆինանսական պարտավորությունները[69]: Լեհաստանում Լիբերալ-դեմոկրատական կոնգրեսի վերջին գաղա-

---

[64] *Cetniew Program Poland: towards democratic capitalism*, ***D. Tusk*** *(ed.), Ideas of Gdansk Liberalism*, p. 220.
[65] Նույն տեղում:
[66] Նույն տեղում:
[67] The identity of the Liberal-Democratic Congress, ***D. Tusk*** *(eds.), Ideas of Gdansk Liberalism,* p. 140.
[68] *Pact with a private enterprise*, ***D. Tusk*** *(eds.), Ideas of Gdansk Liberalism*, p. 160.
[69] Նույն տեղում:

փարն, ուղղված լիբերալիզմի իրականացմանը, իր ընտրազանգվածի և վաղ 90-ական թվականների միջին խավի (ձեռնարկատերերի) միջև կապի հաստատումն էր: Դրա արտահայտությունը եղավ մասնավոր ընկերության հետ 1992թ. հոկտեմբերի 25-ին կնքված համաձայնագիրը և այն հաստատագրումը, որ դա անհրաժեշտ է ապահովելու լեհական կապիտալի ներկայացուցիչների ավելի մեծ ազդեցությունը կառավարության տնտեսական քաղաքականության վրա:

Եզրակացություն

Ուսումնասիրությունը վկայում է, որ «Գդանսկի լիբերալների» դերակատարությունը հետկոմունիստական Լեհաստանում եղել է ինչպես առանձնահատուկ, այնպես էլ կարևոր: Չլինելով խորհրդարանական քաղաքական ուժի ներկայացուցիչներ՝ խմբի անդամները, «Քաղաքական ակնարկի» հրապարակումով, գաղափարական քննարկումների և բանավեճերի միջոցով էական ազդեցություն են ունեցել Լեհաստանում ժամանակի ոգուն համապատասխանող լիբերալիզմի ձևավորման վրա: Երևույթը կարևոր էր տրանսֆորմացիայի էությունը բացահայտելու տեսակետից, ուստի խնդրի խորքային ուսումնասիրությունը կօգնի այն հասկանալ ամբողջ Արևելյան Եվրոպայում:

The Gdańsk Liberals – an Exemplification of Polish Pragmatic Liberalism

PIOTR BIEGASIEWICZ
Open University, United Kingdom

The purpose of the article is to present the ideology and socio-political program of the Gdansk liberals. Subsequently, an attempt will be made to incorporate the concept of the Gdansk liberals in the party program of the Liberal Democratic Congress (Kongres Liberalno-Demokratyczny). The introduction focuses on the definition of intellectual formation called the Gdansk liberals. Further the author introduces the basic ideas, the political program (political system of state, privatization as an attempt to create a middle class, regionalism, and the issue of "liberal revolution"). The article ends with reflections on the relationship of Gdansk's liberals to Congress.